ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ
ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

# ԴԱՍԸՆԿԵՐ



## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

## Ա ՏԱՐԻ

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

ԱՔԿ
138
428
181-Չի
91.542-81

[ՀԱՅԱՍ]ՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.*

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԴԱՍԸՆԿԵՐ

## ԱՅԲԵՆԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

*կազմեցին՝*

*Արշակ Չիլինկարյան, Տիգրան Ռուշմանյան, Ավ. Իսահակյան*

ԱՐԽԻՎ

ՊԵՏՀՐԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 43.

Երևան — 1922



138-ԿԳՀ





ա



պապ

սա պապ

սա 



ա սա պապս։



**սար**

պապ, սաս սար

սաս, պար պար



**տատ**

սա 

տատ, սաս պար

**ի**



պապի, արի

տիտի ա բա.

տատի, սաս սար.




Մա տիտ

Մա մի, ա րի մի,
Մա տիտ տամ
տար պա պիս.

Կար միր 
Մա մի, մի  տար
Մաս մաս ա րա.
պա պիկ, մի կապ
կար միր մա տիտ,
տար, ա րա մաս մաս





լամ պա

լի պա րիտ, ա րի մի

լամ. պա տար.



ա րամ, ա րի

ի լիկ տամ, տար

տա տիս.



**ուլ**

տա տի, ա սա ուլիկ

ուլիկ պու լու լիկ,

կար միր կար միր

սու լու լիկ

## Նու նիկ



ու նիս մի տիկ նիկ.
տիկ տիկ տիկ, սի րու նիկ,
տիկ տիկ տիկ, իմ տիկ նիկ.

պար պար սի րուն պար,
տա տիկ, ա րի լու սի կին տար.



վա նին

լավ վար ա րավ.

կար միր



տուն տա րավ.

վա րիր, վա րիր, իմ մա րալ,

ապ րիս, վա րիր, իմ սի րուն,

վար տուր ար տս, իմ մա րալ.



**Ե մին**

եմ ման ա սում է.- Ե միկ, տես,

նկա րում եմ ու կար միր

ներ կում եմ սի րուն 

 ու 

կա տուն մու կին ա սավ,

սի րուն մու կիկ, պար ա րի.

վա. նին է մի կին ա սավ,

տուն ա րի.

ե մի նի  ---------ը

սու րե նը լու սի կին ա սավ.

վա՜, վա՜, մուկը, մուկը, իմ մուկը

ըն կավ պու տու կը,

կե րավ  -----------ը.







յե րա նը

ու նի յեր կու

յեր կար պա րան

ու մի 



սի րուն ա րև

սև սև ամ պեր

սի րուն ա րեը սև սև ամ պե րի

տակն է.



## վարսիկի կատուն

վարսիկը ուներ
մի սև կատու
լավ կերակրում էր,
սիրում էր ընկերի պես,
նանիկ էր ասում,
պար պար անում.



պավե՛ն,
տես, յերանի պարտեզը
սիրուն է.

արև, արև, յե՛կ յե՛կ,
պիպի սարին վեր յեկ.
պիպի սարը, տե՛ս, տե՛ս,
պլպլում է լուսի պես.

**ո**նիկը և վոսկանը
վորսում են կարմիր ու վոսկի





Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI - 1922
имени А. Мясникяна





որոր, որոր, իմ լալա,
յերկար որեր ունենաս.
որոր, որոր, արևիկ,
նանի՜, նանի՜, սիրունիկ.

ԱՐԽԻՎ

դուրգենը



նամակ է գրում տատին.

սիրելի տատիկ

ես գիր գրել գիտեմ,

տես, նամակ եմ գրում. ես

նկարել գիտեմ, նկարել եմ

 . սա ո՞վ է. նամակս

տուր, կավենը տեսնի.

գուրգեն



## սրտոտ գորտը

մի գորտ ընկնում է անիվի տակ և վնասվում է. ընկեր գորտերը վրա են վազում, ուզում են օգնել և ասում են. անիվին պիտի մի լավ տրորել, կտոր կտոր անել.

դանակով



ը  է կտրում,

իրար վրա դարսում

է, դարսում ու մի

պստիկ սար է անում.



լավ ընկերներ

վարիկը, լուսիկը, արամը և վարդգեսը

պատրաստում են կավե   

և մի պստիկ կով. ապա յերգում են ու պարում են.



թամարի

 -ը

կապել են.

թամարը թագուն մտավ

թաթիկի պարտեզը և թութ

կերավ։ թաթիկը տեսավ, ասավ.

„թամար, թե ուզում ես

թութ ուտել, յեկ ասա,

ապա կեր։“



ցոլակը գնում է

ու յերգում

ցուրտ է, ցուրտ է,

տերևները ցիր ու ցան,

թոն է գալիս,

գետը լալիս,

սիրուն որերը անցան.



ցոլակի ակնոցը

ցոլակն ասում է.—պապի, ասում ես

ակնոցով լավ են տեսնում.

սիրելի պապի, տուր ակնոցդ.

տեսնեմ, տատին ո՞ւր է դրել

գաթան ու միրգը.



բաբկենը

վեր է ընկել.

ցոլակը օգնում և ասում է.

յես ունեմ մեկ բերան,
մեկ բերան վոսկի բերան.
Նրանով պատմում եմ,
գրեր կապում, կարդում եմ,
լավ բաներ ասում եմ.



ա՜յ. ա՜յ, յես վայր ընկա,
ասում ե բաբկենը.

ցոլակ, յես այսոր մի անգամ էլ վայր եմ ընկել. մայրիկս այգի գնաց. յես էլ թագուն վազեցի թը՜ք. վայր ընկա.



Քիթս ցավում է,
վա՜յ, վա՜յ, ասում է
Բաբկենը ընկերը սիրտ
է տալիս ու յերգում.

աքլոր, աքլոր, աքլորիկ,

կարմիր միրուք սիրունիկ,
քա՜նի այդպես վազվզես,
բակ ու այգի քանդոտես.



ղավարը աղա,
նավարը աղա,
բա մեր աղունը
ո՞վ պիտի աղա



շուշիկը

ուտում է 

սիրելի շուշիկ

յես մի շեկլիկ շնիկ ունեմ. շուտ շուտ

շաքար եմ տալիս վոր գամ քեզ մոտ,

շնիկս եւ կը բերեմ.

քո լուսիկ



Խաղողը
լավն է

խորեն, խակ սեխ, թթու խաղող մի
ուտիր. գնա բեր ճաղյր, սև ու
դեղին խաղող.— Մայրիկ, վո՞րը տամ
ղոզիկին, վո՞րը տամ. վարիկին,
պապիկին ու վաչգենին.

 նամինը
նոր խաղող է

նիր ու նամին
լավ վանիկին,
գիր ու գրին
մեր խանիկին.

Մեկը գալիս է մոլլի մոտ և ասում է.
-մոլլա, այս կտորը ներկիր այնպես,

վոր վոչ սև լինի, վոչ կարմիր,
վոչ դեղին, վոչ կանաչ և վոչ
կապուտ. „լավ, ասում է մոլլան“:
—յե՞րբ գամ տանեմ. „արի այնպիսի
որ, վոր լինի վոչ յերկուշաբթի,
վոչ յերեքշաբթի, վոչ չորեքշաբթի,
մի խոսքով շաբաթվա վոչ մի որը.





ջալալը
ջրում է



ջվալը լիքը ցորեն,
ջալալը դրեց ջորուն,
գնաց ջաղաց, մանր աղաց.
ջորին գալիս նստեց ջրում,
ալյուրն յեղավ ջրի խմոր,
մեր ջալալը մնաց մոլոր.



հորթը սիրուն է
հայկը զալալին ասում է.
քո սիրուն հորթը մըրսել
է, հազում է.

հոբոսի մանգաղը

հոբոսը ճաղ անելիս վոտը կոտրեց.
հոբոսը գնաց ղինող դարբնի մոտ
և ասաց. „տո, տնավեր, վոր քո
մանգաղի հունարը կարելն է,
էլ ինչու՞ տվիր:



հայկն ու զալալը թղթից

կտրատում և նկարում են





ճուտը խաղողն ուտում է.

վազգէն զան, ճիր, արի, ծիվ ծիվ խաղանք.

ծիվ, ծիվ,

աքլորածիվ.



աքլորը գնաց յերևան,

բուրդ բերեց,

բամբակ բերեց,

ղալ արավ
ղալվար կարավ.
հոպ ճրնճղիկ,
պապոնց ջրդիկ



ծիտ ու ծաղիկ
ծիտը ճլվլում է.
ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ,
ծիտիկ եմ, ծիտմիտիկ եմ,
մոր բերած եմ, հոր պահած եմ,
ալիվ նանի խաղցրած եմ.

# կապույտ մանուշակ.



կապույտ գլխով,
կանաչ վոտով
յես ծաղիկ եմ
անուշ հոտով.

վո՜րքան սիրուն են կանաչ տերևները, գույն գույն ծաղիկները, կարմիր ու կապույտ. յեկեք նկարենք, ղըթաներ շինենք

Ծույլ թևանը

թևան, գնա, կալսիր.

—ո՜, գլուխս ցավում է.

թևան, յեկ մածուն կեր.

—ո՞ւր է իմ մեծ գդալը.



ժամացույցը

ցույց է տալիս

ժամի ութը.



այ, մեր Ծույլ թևանը

քնից չի վեր կացել.



կռունկներ

կըռկըռ կըռկըռան,
կըռունկները հա թռան.
կռունկների թևի տակ
յեկավ ամառ մեր դռան.

---

„բարի լույս, գաբո ջան“:
—այ բարին արևդ, քեռի խելը„

„ի՞նչպես ես, լա՞վ ես“:

—շնորհակալ եմ. բայց իմ անունը գաբո չէ.

„իմ՞ն էլ խենչո չէ“:

## փիսիկ



մյո՜, մյո՜, փիշո փիշո.

—ո՞ւմ կատուն ես.

աղաբեգի.

—ի՞նչ ես ուզում.

չիր ու չամիչ.

—ո՞ւմ ես տանում.

իմ փոքրերին.

–վոր գողանաս ,
կը տա՛մ գլխիդ
փիլտա՜, կորի .

փոքրիկ հակոբը չար տղա էր . մի որ հասմիկ քրոջը ծեծեց, ինքն էլ վայր ընկավ հատակին և ճակատը պատռեց .

–հակոբ, ճակատդ այդ ի՞նչ ես արել.
„մայրիկ, կծեցի:“
–դու քո ճակատը ի՞նչպես կծեցիր .
„աթոռի վրա յելա և կծեցի:“



մի աման ձու
ձեր սեղանին մի
աման ձու.
ձեր դռանը մի
ձիաբեռ ձուկ.



յերկու ձի

ձմեռ եր. յերկու ձի գնացին ջուր խմելու.
գետը սառած եր. մեկ մեկ փորձեցին,
չկարողացան սառույցը ջարդել ծարաւից

թուլացել էյին. Նրանք մտածեցին, հնարը գտան.
յերկուսով մեկտեղ սառույցին խփեցին,
կոտրեցին, կուշտ ջուր խմեցին.



փայտոն

ֆլորան գնում է
ֆայտոնով.
Նունուֆարը կի ուզում
ֆուրգոն նստել.

---



| | | | |
|---|---|---|---|
| Ա | ա | Ի | ի |
| Պ | պ | Մ | մ |
| Ս | ս | Կ | կ |
| Ր | ր | Լ | լ |
| Տ | տ | ՈՒ | ու |



կու կու—լի կո՛ւ,
պստիկ—մստիկ,
կարմիր կատար,
արի՛, արի՛,
կուտիկ տար․

| | | | |
|---|---|---|---|
| Ն | ն | Ւ | ւ |
| Վ | վ | Կ | կ |
| Ե | ե | Ո | ո |
| Ը | ը | Գ | գ |
| Դ | դ | | |

## վարդանը յեվ վոսկանը

վարդանը գետի մոտ ման եր գալիս, մեկ ել գլորվում, ընկնում ե գետը.

— վա՜, վա՜, ասում ե մանուկը.

վոսկանը վազում, վարդանին ազատում ե.

| | | | |
|---|---|---|---|
| Թ | թ | Շ | շ |
| Բ | բ | Խ | խ |
| Ց | ց | Չ | չ |
| Ք | ք | Այ | այ |
| Ղ | ղ | Ույ | ույ |
| Յ | յ | | |

## խաղ

— բարեվ, ասա՛ թան.

— թան.

— յերթաս‿գութան.

— ասա՛ թուշ.

— թուշ.

— ուտես նուշ.

— ասա՛ գրիչ.

— գրիչ.

— ուտես չիր ու չամիչ.

— ասա՛ ցախ.

— ցախ.

— խմես քացախ.



## բոբը

1. — ազատեցե՛ք, իմ վորդուն կրակի բոցերից, լալով կանչում ե մայրը.

— ազատեցե՛ք իմ յեղբորը, գոչում ե քույրը և լալիս. մայրը մի անգամից ուշքի ե գալիս և ասում շանը. — բե՛ր, գնա, բեր Թորոսին.

2. — շունը վազում, մտնում ե այրվող տունը, Թորոսին ազատում, բերում տալիս ե մորը. բոլորը գովում են բոբին. անվախ շունը նորից վազում, մտնում ե կրակը. այս անգամ դուրս ե բերում մի տիկնիկ.

---

Ջ ջ
Հ հ
Ճ ճ

Ջո՜ւ ջո՜ւ, ջո՜ւ ջո՜ւ, իմ հավիկներ,
ճերմակ ճուտեր, հավ մարիկներ,
դուք ճռճռան սիրուն ճտեր,
եկեք, կերեք ձեր հատիկներ.

Ժ ժ
Ծ ծ

ժիր ծովինար, անուշ ժորժիկ,
հայկակ, ծերուն՛, խորեն ծաղիկ,
յեկե՛ք, տեսեք, ո՞ւր են հավեր.



## մատների վեճը

ճկույթ — ա՛յ քուրիկներ,
ջան քուրիկներ,
յես քաղցած եմ,
հաց եմ ուզում.

մատանու մատ — վոր հաց չունենք,
վո՞րտեղից գտնենք.

միջին մատ — աստված կը տա,
մենք էլ կուտենք.

ցուցամատ — յեթե չտայ,
ի՞նչպես ճարենք.

բութ — գողանանք, կուտենք.

հենց որ բուքն այսպես ասաց,
բոլոր քույրերը մեկտեղ հավաքված՝
վրա տվեցին, բուքին ծեծեցին,
այնպես ծեծեցին, որ այն օրից դես
խեղճ բուքը մնաց կարճ ու սևերես.

| | | | |
|---|---|---|---|
| ՅՈՒ | յու | Փ | փ |
| ՈՅ | ոյ | Ռ | ռ |
| ՅՈ | յո | Ձ | ձ |
| ՅԱ | յա | Ֆ | ֆ |

## քաղաքացին ու գյուղացին

— հարություն ապեր, ինչ ես բերել ծախելու.

— ինչ պետք լինի գյուղացու բերածը, ախպեր, յուղ, պանիր, ալյուր.

— քանիսով ես ծախում.

— ինչ ասեմ, թանգություն է. ալյուրի փութն արժե յոթ աբասի, յուղի փութը՝ տասն և յոթ մանեթ.

— ո՜յ, ինչ թանգ է. դե, մի յոթը փութ ալյուր, մի փութ յուղ քաշիր, ֆուրգոնով ուղարկիր մեր տուն, կիրակոսյանի տունը.

ս Ս ս Ս

ա Ա ա Ա

տ Տ տ Տ

պ Պ պ Պ

*Սոսի, Արամ, Պետո, Տիրան*

Սոսի, Արամ, Պետո, Տիրան
շտապում են ուսումնարան։

## Գիրք

Սամ տեսնեմ,
իմ սիրուն գիրք
այս ի՜նչեր կան
ծոցիդ մեջը՝
ճստան մուկը,
վոսկի ձուկը,
Թիթեռ, բզեզ
իսկ ծաղկի պես.
բադն ու պուլիկ,
գառն ու ուլիկ,
կաքավ ու լոր,
շլոր, սալոր.
դե՜հ, շուտ պատմիր,
իմ խելոք գիրք,
յես քեզ կը տամ
մի բուռը միրգ։

---

ո Ո ո Ո — Ոսան, Ոնիկ

ռ Ռ ռ Ռ — Ռուբեն, Ռուսաստան

Ոսանը Ռուբենի քույրն է։

Ո՞վ է յեփում թոնրի հացը․
Ո՞վ է կտրում մանկան լացը․
Ո՞վ է պահում գյուղի հոտը․
Ո՞վ է քաղում դաշտի խոտը․

ր Ր ր Ր — Րաֆֆի

բ Բ բ Բ — Բաբկեն

ք Ք ք Ք — Քանաքեռ

## Ռուզանը

— Օգնեցե՛ք, օգնեցեք, կանչում էր փոսի մեջ ընկած կույր Սահակը, օգնեցեք և ինձ ազատեցեք։

Սահակի ձայնը լսում է փոքրիկ Ռուզանը, վազում, կանչում է հայրիկին։

Իի ի Ի | Իսահակ
Խխ խ Խ | Խաչիկ, Խորեն
Էէ է Է | Էմին, Էմիլ

Իսահակ, Րաֆֆի, Էմին, Խաչիկ ընկերներ են:

## Խոզիկ

— Խոզիկ, այդ վօրտեղից:

— Աղայի բակից եմ գալիս:

— Ա՜յ ճըղճըղան ծուռ պոչիկ, լա՞վ լցրիր քո փորիկ:

— Անտեր մնա այդպես բակ, կարգ ու կանոն ել չկար. շատ ման յեկա դես ու դեն, ուտելու բան չգտա, ամեն տեղ մաքուր եր, աղբակույտ ել չգտա:



Ն ն   ն Ն  |  Նունիկ, Նունե

Հ հ   հ Հ  |  Հայկ, Հրանդ

## Աշուն

Արի՛, աշուն, արի՛ նաշխուն,
Արի՛ ու բեր շատ բարիքներ,
Հասած դեղձեր, մեծ մեծ սանձեր,
Խնձոր ու նուշ, մրգեր անուշ։

Ժ ժ   ժ Ժ  |  Ժորժիկ

Ծ ծ   ծ Ծ  |  Ծովինար

Թ թ   թ Թ  |  Թորոս, Թաթոս

Ժորժիկը, Ծովինարը և Թորոսը
գրում ու կարդում են։

Ճճ ճ Ճ | Ճանիկ, Ճորոխ

Ջջ ջ Ջ | Ջոնիկ, Ջորագետ

Յյ յ Յ | Յերան

Ձմեռ է: Ճանապարհները ձյունով ծածկվել են: Յերանը չի կարող գյուղ գնալ:

Այն ինչ է՝
Թե խոսես, կը խոսի.
Յեթե թողնես, կը քնի։
Թեկուզ ինչ էլ վոր լինի,
Նա հավիտյան չի մեռնի։

## Մուրիկի փիսիկը

Սիրուն փիսիկ, ապա ասա, ինչ է այս տեղ նկարած. փիսոն նայեց, հոտ քաշեց, բան չիմացավ, պոչը միայն ծռմռեց։

— Հը, չիմացա՞ր, ա՜յ յես ասեմ. սա մի գիրք է, այս բանին էլ պատկեր կասեն, նկարել են ինձ ու քեզ։



| | | |
|---|---|---|
| մ Մ | *մ Մ* | *Մարգարիտ* |
| յ Յ | *յ Յ* | *Յոլակ* |
| կ Կ | *կ Կ* | *Կարդոս* |
| վ Վ | *վ Վ* | *Վարդան* |

## Աշնան տերևը

— Մրսում եմ, մրսում.
Ծառի վրայից
Տերևն է կանչում:
— Քամի ջան, քամի,

Շուտ յեկ, ինձ ոգնի.
Վոր ծառից իջնեմ,
Սիպտակ ու փափուկ
Վերմակով ծածկվեմ:

փ Փ  փ Փ | Փառանձեմ

չ Չ  չ Չ | Չամչյան

Չար Փառանձեմը աղմուկ է անում։

## Մատների խաղը

բութ — Ա՛յ, ա՛յ գայլն յեկավ.
ցուցամատ — Վորտեղից յեկավ.
միջին մատ — Տես, տես, սարից յեկավ.
մատանու մատ — Փախչենք, յերթանք.
ճկույթ — Վա՛յ, վա՛յ,
Պստլիկ եմ,
Չստլիկ եմ,
Չուստեր չունեմ,
Ի՞նչպես փախչեմ։

| | | |
|---|---|---|
| Վ Ջ | վ Ջ | Ջարել |
| Փ Փ | փ Փ | Փլորա |

Ջարիկն ու փլորան յերգում են:

## Նոր տարի

Եկավ հասավ Նոր տարի,
Հետը բերավ նոր բարի,
Մանր տղոց ուրախ որ,
Բարի զավակ հորն ու մոր

Մանր տղայք են ուրախ,
Ունեն կաղին, գոզինաղ,
Սալորի չիր, չամիչ, թուզ,
Փշատ, ունաբ ու ընկույզ:

| | | |
|---|---|---|
| Լ Լ | լ Լ | Լևոն, Լուսիկ |
| Ը Ը | ը Ը | Ընձակ |
| Շ Շ | շ Շ | Շողիկ, Շուշանիկ |

Լևոնը, Շողիկը և Ընձակը ձնե մարդ են շինում:



## Ծույլ Խաչիկը

1. — Խաչիկ, ուսումնարան գնա։
— Մայրիկ, դեռ վաղ է։
— Խաչիկ, դասդ սովորիր։
— Ո՜, գլուխս ցավում է։
— Խաչիկ, յեկ, հաց կեր։
— Խաղող էլ կը տաս մայրիկ։

2. — Մի օր էլ Խաչիկը գիրքը բաց արավ, ծառի տակ նստեց, վոր դաս սովորի։ Նայեց, նայեց՝ վոչինչ չսովորեց. Խաչիկի քունը տարավ։

3. — Մի փոքրիկ այծ մոտեցավ նրան, պոզերով խփեց։ Քնած Խաչիկը վեր թռավ, գոռալով վազեց։
— Տեսար, Խաչիկ, այծն էլ քեզ պատժեց, ասաց մայրիկը։

| | | |
|---|---|---|
| ղ Ղ | ղ Ղ | Ղազար, Ղուկաս |
| ջ Ջ | ջ Ջ | Ջալալ, Ջավո |
| դ Դ | դ Դ | Դավիթ, Դանել |
| գ Գ | գ Գ | Գրիգոր, Գարեգին |

Ղազարը, Ջալալը, Դավիթը և Գրիգորը կավից շինում են գնդակ, ձու, խնձոր. մյուս ընկերները կարմիր ու գույն գույն դրոշակներ են պատրաստում։

---



## Ձին ու ճնճղուկը

Ձմեռ էր. ճնճղուկն՝ յեկավ
խեղճ, անոթի, գոմը մտավ.
մտավ, թռավ մսրի ծայրին,
սիրուն ձիուն ծի՜վ ծի՜վ ասավ.

— Ա՜յ սիրուն ձի, յեղիր բարի,
Ձմեռ որ է, մի քիչ գարի,
Իմ բռի չափ, վոր ինձ բաշխես,
Ելի դու միշտ կուշտ կը լինես։

— Խեղճ ճընճըղուկ, վեր առ ու կեր,
Ի՛նչքան կուզես, ասաց մեր ձին.
Ունեցածս մեզի համար
Շատ հերիք է մինչև ամառ։

**Բանն ո՞վ անի, յես ու դու.**
**Հացն ով ուտի, յես ու դու:**

## Ձմեռ պապի

Արի, արի, ձմեռ պապի,
Սպիտակ հագի, սպիտակ կապի,
Սարում, ձորում սուլիր, յերգիր,
Հեքիաթ պատմի հետաքրքիր։

Դաշտ ու անտառ, գետ ու գետակ,
Այս ամենը առ թևիդ տակ․
Գցիր կամուրջ, փռիր կարպետ,
Այ անուրագ, անձեռ վարպետ։

# Արևն ու ծաղիկները

Արևը — Սիրուն աղջիկ, ի՞նչ ղրկեմ քեզ։
Աղջիկը — Յես ծաղիկներ կուզեմ պես պես։
Արևը — Ա՛յ աղբյուրներ, ա՛յ գետակներ,
Սառցի ներքև քընած եք դեռ.
Դո՛ւրս յեկեք, դո՛ւրս,
Շո՛ւտ, դեպի լույս,
Կարկաչեցեք
Ու կանչեցեք
Հողում քնած սիրուններին՝
Ծաղիկներին ու ծիլերին։
Ջրերը — Վո՛ւշ-վո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ,
Այս ինչքա՜ն ուշ...
Ծաղիկը — Բարև, բարև, կարմիր արև,
Ա՜խ, ի՜նչ լավ է դեպի վերև՝
Ազա՜տ, լո՛ւյս, տա՜ք,
Կապո՛ւյտ, հստա՜կ...
Արևը — Սիրո՞ւմ եք ինձ...
Ծաղիկը — Ա՜խ, այնպես եմ սիրում, այնպե՜ս,
Եվ առանց քեզ չեմ ապրիլ յես...
— Յես քեզ հետ եմ ուր որ գնաս...
Յես կը տըխրեմ՝ որ հեռանաս...

ԱՐԽԻՎ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библио[illegible]
7/XI 1922
имени А. Мясникя[illegible]
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑԱՆԿ

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆ


Գրության նախավարժություն 2
Ընդհ. պատկեր Ա. . . . . . . 3
Կրկնող. պատկ. անցծ. տառ. սահ. ա. 12
Ընդհ. պատկեր Բ. . . . . . . 13
1. Վարսիկի կատուն . . . . 15
2. Արև, արև, փոխն. ժողովրդ. 16
3. Որոր, փոխ. . . . . . 17
4. Գուրգենի նամակը . . . 18
5. Սրտոտ գորտը . . . . . 19
6. Դանդան մանկիկ փոխ. ժողովր. 20
7. Իմաստուն կովը . . . . 20
8. Թոն արավ, փոխ. ժողովրդ. . 22
9. Ցուլակի ակնոցը . . . . 23
10. Յես ունեմ . . . . . . . 25
11. Աքլոր . . . . . . . . 26
12. Սիրելի Շուշիկ . . . . 28
13. Մեկը գալիս է մոլլի մոտ . 30
14. Կրկնողական պատկեր Բ. Գ. Դ. 32-33
15. Ջվալը լիքը ցորեն . . . 34
16. Հորոսի մանգաղը, ժողովրդ. 35
17. Աքլոր, փոխ. ժողովրդ. . . 36
18. Ծիտիկ եմ, » . . 37
19. Ծույլ Թևանը » . . 39
20. Կռունկներ, փոխ.» . . 40
21. Բարի լույս, Գարո, ժողովրդ. 40
22. Փիսիկ, փոխ. . . » . 41
23. Փոքրիկ Հակոբը . » . 42
24. Յերկու ձի . . . . . . . 43
25. Կրկնողական պատկեր Ե. . 45
26. Կու-կու-լի-կու, փոխ. . . 46
27. Վարդանը և Վոստանը . . 47
28. Խաղ . . . . . . . . . 47
29. Բոբը . . . . . . . . . 48
30. Ջու, ջու . . . . . . . 48
31. Մատների վեճը, փոխ. ժողովրդ. 49
32. Քաղաքացին և գյուղացին . 50
33. Գիրք, փոխան. . . . . . . 51
34. Ո՞վ է յեփում . . . . . . 52
35. Ռուզանը . . . . . 52
36. Խոզիկը . . . . . . . . 53
37. Աշուն, փոխ. . . . . . . 54
38. Սուրիկի փիսիկը . . . . 55
39. Աշնան տերևը . . . . . 56
40. Մատների խաղը, ժողովրդ. . 57
41 Նոր տարի, փոխ. Գ. Ֆաթ. . 58
42. Ծույլ Խաչիկը . . . . . 59
43. Ձին և ճնճղուկը, փոխ. . . 61
44. Ձմեռ պապի . . . . . . 62
45. Արևն ու ծաղիկները . . . 63


Հավելված


1. Ոչխիկ, ուլիկ, Նոռ . . . 8
2. Թե խոսեն, Գիրք . . . 56

-100-

ՀՀ Ազգային գրադարան
NL0836033

Ա 43

Ա 9-2
138

# ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈ

## Դասագրքեր

№ № Գինը

15. Սուրխաթյան—Գրական գոհարներ (քրիստոմատիա) 3 ր. — կ
16. Լ. Ն. Նիկոնով—Բույսի կյանքը (պարզ փորձերով և 12 նկարով) Թարգմ. Ա. Տ.-Գ. . . . . — 40 կ
20. Աշխատանքի դպրոց (մայրենի լեզվի դասագիրք) Բ. տարի 60 կ
22. Դեպի լույս (այբբենարան հասակավորների համար) կազմեց Հովհաննես Տեր-Միրաքյան . . . — 20 կ
26. Մ Աբեղյան—Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության 8
30. Ինչպես կազմել ներբարիում—ըստ Նիկոնովի կազմեց Ա. Մուշեղյանց . . . . . . — 10
39. Ռ. Գաբրիելյան—Բնագիտական զրույցներ, մասն Ա. Անկենդան բնություն . . . . . — 40
10. Նույնը—մասն Բ., Բույսի կյանքը . . . — 40 կ
14. Վ. Կեմպբել—Զննական յերկրաչափություն. Թարգմ. Հ. Նավակատիկյան—տպագրվում է
43. Դասընկեր (մայրենի լեզվի դասագիրք) Ա. տարի, . 80 կ

---

## Ծրագրեր.

13. Օրինակելի ծրագիր պատմության
14. Օրինակելի ծրագիր արվեստի
13. Օրինակելի ծրագիր մաթեմատիկայի
14. Օրինակելի ծրագիր աշխարհագրության
35. Օրինակելի ծրագիր մայրենի լեզվի.

Գինը 80 կ.

Լույս տեսած գրքերը ծախվում են Լուսժողկոմատի շ
քում, Աբովյան փող. № 20, Յերևան.

Կլիշեները պատրաստել է Պետմշակի ցինկոգրաֆիան.
Գիրքը տպագրված է Լուսժողկոմատի տպարանում (Վաղարշապատ).